

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատր 40 փարայ է : — Պօրիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիա պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Կանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ա. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից Նոր Գրատունը :

### Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Երէկ Պատրիարքարանի մէջ, ընդ նախադահութեամբ ամեն Ս. Պատրիարք Հօր. կրօնական Համագումար ժողով կազմուելով, կրօնական ժողովոյ վեց անդամոց համար հետեւեալ եռապատիկ ցանկը պատրաստուեցաւ :

Ներսէս	Եպիս. վարժապետեան
Յովհաննէս	» Սեթեան
Սիմէոն	» Մէֆէրեան
Խորէն	» Նարպէյեան
Յովհաննէս	» Կապուտիկեան
Կարապետ վարդապետ Պատ. փոխ. Պօլոսոյ	
Խորէն վարդապետ Պատ. փոխանորդ. Երուսաղիմայ	
Յովհաննէս	վար. Չըպրզ ճեան
Յովհաննէս	» Ղալաթիոյ
Ամբրոսիոս	» Բերայի
Ներսէս	» Սամաթիոյ
Տ. Գէորգ	քահ. Խասդիւղի
Տ. Գրիգոր	» Աճէմեան
Տ. Արիստակէս	» Սամաթիոյ
Տ. Սուքիաս	» Մայրեկեղեցւոյ
Տ. Իգնատիոս	» Միջագիւղի
Տ. Յարութիւն	» Պալատու
Տ. Սահակ	» Միջագիւղի

Հինգշաբթի օրն ալ ֆաղաքական ժողովոյ վեց անդամոց համար եռապատիկ ցանկ մը պատրաստուեցաւ որոշեալ մասնաժողովոյ միջոցաւ. որք են

Աբէլ	էֆէն. կիւլլէնիկեան
Բարթող	» Բիւրքճիպաչլեան
Գէորգ	» Մուրատեան
Գրիգոր	» Ներսէսեան
Չենոր	» Պէօրէկճեան
Կարապետ	» Բէմալիկեան
Կարապետ	» Քարակէօզեան
Միհրան	» Սեթեան
Միքայէլ	» Յակոբեան
Մկրտիչ	» Բիւրքճիպանլեան
Մանկասար	» Ալեքսանեան
Յակոբ	» Յրէնիկեան
Յակոբ	» Նորատունիկեան
Յարութիւն	» Գալիամաճեան
Յովհաննէս	» Պօյաճեան
Ռուբէն	» Կիւմիւշկերտան
Տիգրան	» Պօնէկիւլեան
Գրիգոր	» Օտեան

Ինչպէս յայտնի է այս երկու ցանկերն նամակաւ պիտի ծանուցուին երեսփոխանաց, սակայն ազատ են ցանկերէն դուրս անձանց համար



քուէ տալ :

Համագումար ժողովոյ մէջ դրա-  
նուող կղերականք արդեօք մուցե՞ր  
են հրաժարեալ Տեղապահ Տ. Արիս-  
տակէս ազգասէր Սրբազանը : Նորին  
Սրբազնութիւնը արժանի չէ՞ կրօնա-  
կան ժողովոյ անդամ ըլլալու : Կյու-  
սամք դոնէ երեսօխոյանք չեն ու-  
նենար այս մեղադրելի մուսայութիւ-  
նը :

— Մայրաքաղաքիս դազդիական  
դեմաքանատան երկրորդ թարգմանը  
այս շարժում պաշտօնական կերպով  
Պատրիարքարան դալով, ի դիմաց  
վնեմ՝ դեմաքանին, շնորհուարեց ա-  
մեն . Ս. Պատրիարք Հօր դահակա-  
լութիւնը :

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Օսմանեան դանտլիաէին մէկ մա-  
սին անցեալները հրապարակաւ սղրի-  
լը փարիզի ու Լոնտոնի մէջ դոհու-  
նակութիւն պատճառեր է :

— Եղիպտոսի Բարձր . Խնիվին որ-  
դիվ . Թէվիիզ վաշան փարիզ գացեր  
է , իւր ուսմունքը կատարելագործե-  
լու համար :

— Գարստապէն կղերական ու աշ-  
խարհական երկու երևելի անձինք  
Բեդրապուրի գացեր են , անձամբ ի-  
մանալու համար թէ՞ երբ շիրթու-  
թիւն մը ծագի՞ օգնութիւն պիտի  
ըլլայ Գարստապցւոյ :

Աւսարիոյ կառավարութեան գըլ-  
խաւոր պոշտօնեոյ Պ. Պայսիթի Ֆիօ-

րէնցա երթալուն պատճառը՝ միայն  
թողաւորին անձնական առողջու-  
թեան որպիսութիւնը իմանալու հա-  
մար չէ , այլ՝ միանգամայն խոտուած  
առնել խոտական կառավարութենէն  
որ , Աւսարիա ու Գազդիա միութիւն  
և գաշնակցութիւն մը կազմած ատեն՝  
խոտիա ալ անմայհեա դանուի :

— Գազդիոյ կառավարութիւնը ,  
անգղիական սակիի արժողութեամբ ,  
ՉՅ Ֆրանքոյոյ սակի դրամ շրջաբերու-  
թեան հաներ է :

— Գազդիոյ լրտպրաց վրայ գըր-  
ուած տուրքը պիտի ջնջուի , և երես-  
փոխանաց վազդիին մէջ ՅՅ քաղա-  
պետաց համար անդ պիտի որոշուի  
եղեր :

— Սլաւոնիոյ առժամանակեայ կա-  
ռավարութեան ելումոյ պաշտօն-  
եայն իրբև դող ցուցեր է իզապէլա  
գահակորոյս թագուհին , հրատարա-  
կելով թէ շատ մը ծանրագին բաներ  
և ազդային թագը մէկտեղ տարած է  
Սլաւոնիայէն վախած ատենը իրապէշ-  
լոյի լծակցին ծանր գալով այս ամ-  
բաստանութիւնը , մենամարտութեան  
հրաւիրեր է յիշեալ պաշտօնեայն :

— Գըրմի անցեալ պատերազմին  
ատեն վախճանեալ Գազդիացի ու  
Ռուս զինուորաց շերիմներն իրենց  
վիճակին մէջ մնացեր են , բայց Անդ-  
զիացւոյ գերեզմաններն թաթարաց  
կազմանէ բացուելով աստիճանաբար  
զեր են թաթարները լսած ըլլալով  
թէ Անդզիացւոյ ստիպութիւնն է ի-  
րենց մեռելները վրանին գանուած  
լաթերով ստակով թաղել : Գերեզ-  
մանատանց երկաթ շրջանակներն ալ  
քակեր տարեր են թաթարները :



—Ռուսաստանի մէջ տեղ մը Հրէայ մը պանդոկ մը բռնած է, և իւր ընտանիքն ալ հան բնակեցուցած է, որ ինք հողիէ կրողիանայ եղեր: Օր մը այս մարդը իւր մէկ սրբուցն հետ դուրսը գտնուած ատենը, մէկ քանի Ռուսեր պանդոկը գտնով թէ) ուզեր են. կինը իմացունելով էրկանը բացակայութիւնը՝ խնդրեր է որ պատեն անոր վերագործին: Ռուսը բարկանալով, խեղճին բոլոր ընտանիքը սրէ անցուցեր են, և իրենց այս չարագործութիւնը բողբոլին ծածկելու համար պանդոկն ալ կրակի տուեր են: Պանդոկագետը այս միջոցին զրայ հասնելով և բոցերը տեսնելով, լեղապատառ եղեր է և սկսեր է պօռալ ու ուրբալ, սակայն անագամ Ռուսերը զանի ալ իւր սրբուցն հետ բոցերուն մէջ նետելով՝ ձգեր դայեր են: Այս անօրէնները կառավարութեան կողմանէ խափուկ դիմատուին եղեր:

—Անգղիոյ թագուհւոյն երկրորդ որդին 200 հազար լիբա վասակեր է, Աւսթրալիոյ ճամբարգութեանը ատեն հանքային ընկերութեանց բաժնիներ առած ըլլալով: —Չէնկիսին խօրօղը ետմուրթը, կրտեն:

—Անգղիոյ մէջ անգղի ունեցած խաւային վերջին մրցման մէջ Ամերիկայի մը ատեր է առաջին մըը: Չամակը: Այս գէպը Անգղիայոց մեծ ցաւ եղած ըլլալու է, որովհետեւ ասանք միշտ յայժմոյ գտնուած են հարաւային մրցման մէջ և մրցման մակոյններուն ընտրութեան համար ամեն ջանք ու ուշադրութիւն կրնեն:

—Ամերիկայի մէջ սղնձի հանքէ

մը 18 հազար խանթարի ծանրութեամբ սղնձի կտոր մը հանուեր է, որուն արժէքը 2 միլեան ֆրանգ կը կարծուի եղեր:

—Չինաստանի կայսրը 16 տարեկան եղած ըլլալով սղնձին կատարելութեան հասած սեպուելով, ըստ սովորութեան պիտի ամուսնանայ եղեր ազնուական համարուած ընտանիքէ գեղեցիկ աղջկան մը հետ:

—Խալիսի թագաւորը որոշեր է որ առաջիկայ դարնան մօտ վիճնա Սուարիոյ կայսեր ատուութեան երթայ, նկատելով որ կայսրը եղիպտոսէն դարձած ատենը ուզեր է իրեն հետ անսնուիլ բայց հիւանդութիւնը արգելք եղեր է:

—Ասարիոյ կայսրը նկատելով որ Տարնացիոյ ապստամբութեան պատճառը, օտարաց զրգուութենէն զատ, անգղոյն բնակչաց ցամաքային զինուորութեան մէջ գտնուիլ չուզէին է, հրաման ըրեր է որ այսուհետեւ զինուորութեան փիճակ ընդունողները ծովային բանակին մէջ մտնեն:

—Խալիսի թագաւորը կը փափաքի և կ'յարգորէ եզեր իւր եղբոր որդին որ Սպանիոյ թագաւորութիւնը ընդունի, սակայն անոր մայրը հաճութիւն չապր եղեր: Եղբոր որդին սակաւին 16 տարեկան է:

—Արուի թէ՛ Նարպէտն կայսեր խմբադրութեամբ պիտի հրատարակուի լանթերն անուն հռչակաւոր լրագիրը, որ ինչպէս յայտնի է կառավարութեան հրամանաւ դադրած է անկէց յառաջ նոյն խոկ կայսեր դէժ խօսած ըլլալուն պատճառ:



ուաւ, և որուն խմբագիրն անուանի Պ. Բօշֆօր հիմա Գաղղիոյ երեւոյն խանական ժողովոյն անդամ է: Գըրեթէ բոլոր Գաղղիա հետաքրքիր է տեսնել թէ կայսրը ինչ ոգւով կամ սկզբունքով պիտի խմբագրէ այս լրբադիրը:

— Նաբոլէոն կայսեր հիւանդութեան ծառայութիւնն ընող բժիշկները կհաստատեն եղեր թէ՛ կայսեր անձնական առողջութեան վիճակը հիմա հիւանդութենէն յառաջ ունեցած վիճակէն աղէկ է:

— Գաղղիոյ կառավարութիւնը նկատելով որ ժամանակէ մ'ի վեր մե նամարաութեան դէպքերը կը շտանան Գաղղիոյ մէջ, որոշեր է որ այսուհետեւ երբ լուրի թէ մէկը մեռամարտելու կ'ենէն՝ 15 էն մինչև 20 օր բանտարկութեան դատապարտուի:

— Ամերիկայի հասարակապետութեան նախագահը գրով խնդրեր է Ռուսիոյ կառավարութենէն որ Հրեայք Հարստահարուին և ազատութիւն ու հանգիստ արուի անոնց: Ասկէց յառաջ այս մասին ուրիշ կողմերէ ալ ազդարարութիւններ եղեր են այս կառավարութեան, և թերևս ասոնց մէկ արդիւնքն է Սինակօկա մը շինելու համար վերջին օրերս արուած հրամանը, զոր արդէն ծանուցած եմք:

— Չինաստանի դեսպանը, Գաղղիոյ՝ Մեդղիոյ՝ Սպանիոյ՝ Պելճիքացի և ուրիշ տէրութեանց մայրաքաղաքները երթալով այլ և այլ դաշնագրութիւններ հաստատելէն յետոյ, հիմա

ալ դէպ 'ի Բեդրասպուրկ ճամբայ ելած է եղեր:

4. ՊՈՒԻՍ. — ԳՈՆՍՈՒԻՏԷ

12 դեկտ. ուրբաթ. երեկոյ  
գոյուեցաւ 49

Օ Ր Ա Յ Ո Յ Ց

1 8 7 0

ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ՏԷՐ ԵՐԵՄԻՍ. ԲԱՀԱՆԱՅԷ

Ընդարձակին գինն է 100  
համառօտինը 60 փարայ է:

Կը ծախուի ամէն Հայ գրատառուաց քով:

Ասպարէզ Ազգային անուն հրատարակութիւն մը մայրաքաղաքէն բոլոր գրավաճառաց քով կ'ծախուի: Ասոր հեղինակը Անձնուէր ընկերութեան պանդուխտ աշակերտներէն է: Կըն ըլլալով, քաջալերութեան արժէքն է:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷ  
Հ. Ս. ԱԼԱՃԱՅԷ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՒՐԳՅԵՍ